

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/1

27 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց «Տիկբագ» ՍՊԸ 06.08.2013 թ-ի գրությամբ բերված բողոքը «ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 25.07.2013 թ-ի թիվ 2121287 ստուգման ակտի դեմ:

«Տիկբագ» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

Հիմք ընդունելով «ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ պետի 12.06.2013 թ-ի թիվ 2121287 հանձնարարագիրը, Սևանի ՏՀՏ Ընթացիկ հսկողության բաժնի հարկային տեսուչների կողմից «Տիկբագ» ՍՊԸ-ում 02.04.2012-13.07.2013թ.թ. իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում տեսուչների կողմից 13.07.2013 թ-ին կազմվել է թիվ 2121287 ակտի նախագիծ, ըստ որի՝ 13.07.2013 թ-ին «Տիկբագ» ՍՊԸ-ի հանրային սննդի կետից հարկային տեսուչ Հայկ Ջուլիակյանը գնել է 4 հատ կարկանդակ՝ կանխիկ վճարելով 280 դրամ, իսկ «Տիկբագ» ՍՊԸ-ի աշխատակից Լիաննա Քոչարյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և չի հատկացրել համապատասխան գումարի կտրոն:

Ակտի նախագծին ծանոթանալուց հետո իմ կողմից «ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ գրավոր առարկություն է ներկայացվել՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

1.13.07.2013 թ-ին՝ ժամը 11:10-ից մինչև 11:30 սահմաններում Գնել Սարգսյանը և Արմեն Աբրահամյանը մտել են վաճառքի սրահ և առանց ներկայացնելու վկայականները, վաճառողուհի Լիաննա Քոչարյանին հայտնել, որ 30 րոպե առաջ իրենց ընկերը սրահից կանխիկ դրամով գնել է 6 կարկանդակ և դրա դիմաց չի ստացել ՀԴՄ կտրոն: (Ակտի նախագծում գրված է 4 կարկանդակ):

2.Վաճառողուհի Լիաննա Քոչարյանի կողմից տեղում տեսուչներին ներկայացվել է առարկություն, քանի որ.

ա. 13.07.2013 թ-ին՝ ժամը 10:00-ից Նաիրյան 170 շենքը եղել է հոսանքազրկված (հիմք՝ «Սևան» էլցանցի տեղեկանքը): Հոսանքազրկման պատճառով այդ օրը մինչ ժամը 11:09-ը մեր կողմից որևէ ապրանք, այդ թվում՝ կարկանդակ չի արտադրվել, առավել ևս չէր կարող վաճառվել: Ավելին՝ մինչ ժամը 12:00 սրահում առևտուր չի իրականացվել:

բ. Լիաննա Քոչարյանը պահանջել է, որ «գնորդը» ներկայանա: Քիչ հետո սրահ ներս մտած նրանց ընկերը (որը բանավոր ներկայացավ որպես հարկայինի աշխատող Հայկ) ձեռքին ունենալով անհայտ ծագման 1 կարկանդակ, հաստատեց, որ իբր 30 րոպե առաջ Լիաննա Քոչարյանից գնել է 6 կարկանդակ, որից 5-ն արդեն կերել է:

3. Ակտի նախագծում նշված է, որ տեսուչները՝ Արմեն Աբրահամյանը, Գնել Սարգսյանը, Հայկ Ջուլիակյանը, Նուշիկ Հակոբյանը, մտել են սրահ և գնում է կատարել նրանցից մեկը՝ Հայկ Ջուլիակյանը, և բոլոր տեսուչների ներկայությամբ Լիաննա Քոչարյանը չի տվել ՀԴՄ կտրոն:

Հավատացեք, որ վաճառողուհի Լիաննա Քոչարյանը դեմքով լավ ճանաչելով հարկային տեսուչներ Գնել Սարգսյանին և Արմեն Աբրահամյանին, գոնե նրանց ներկայությամբ չէր կարող չտրամադրել ՀԴՄ կտրոնը:

4. Ակտի նախագծում նշված ժամը 11:13-ին, 280 դրամի մուտքագումը ՀԴՄ, ինչպես նաև ժամը 11:16-ին ՀԴՄ-ից դուրս բերված «Z» հաշվետվության դուրս բերումը կատարվել է հարկային տեսուչներ՝ Գնել Սարգսյանի և Արմեն Աբրահամյանի կողմից:

5. Ակտի նախագծում նշված ակտի անբաժանելի մաս հանդիսացող «Z» հաշվետվությունը կցված չէ նախագծին:

6. Ակտում նշված ակտի անբաժանելի մաս հանդիսացող «Z» հաշվետվությունը կցված չէ ակտին:

27.07.2013 թ-ին ստացել եմ «ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ կողմից 25.07.2013 թ-ին կազմված թիվ 2121287 ակտը:

Խնդրում եմ ներկայացված ակտը համարել չեղյալ, ուսումնասիրել նշված ոչ հավաստի փաստերը, գնահատել հարկային տեսուչների կողմից արդեն երկրորդ անգամ շինծու տվյալների ներմուծումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ՀՏԻԿԲԲԳ ՍՊԸ տնօրենի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում»:

Նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է»:

Քննարկման ընթացքում նշվեց, որ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ հոդվածների դրույթները ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 745-Ա հրամանով հաստատված «Հարկային մարմնի կողմից ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման, անցկացման և իրացման կանոնակարգ»-ով սահմանվել է ստուգման հանձնարարագիրը ստուգվող տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին ներկայացվելու առավելագույն ժամկետ: Մասնավորապես, «Հարկային մարմնի կողմից ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման, անցկացման և իրացման կանոնակարգ»-ի 54-րդ կետի համաձայն. «Հարկային մարմնի ղեկավարի կողմից հրապարակված հանձնարարագրով նախատեսված ստուգումը հանձնարարագրի հրապարակմանը հաջորդող 30 օրացուցային օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին չճանոթացնելու դեպքում նշված ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը ստուգող կառուցվածքային ստորաբաժանումը զեկուցագիր է ներկայացնում հարկային մարմնի ղեկավարին ստուգման հանձնարարագիրը չեղյալ ճանաչելու (հաշվառումից հանելու) վերաբերյալ՝ նշելով ստուգման հանձնարարագիրը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին չճանոթացնելու պատճառները»:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ պետի թիվ 2121287 հանձնարարագիրը հրապարակվել է 12.06.2013 թ-ին, իսկ հանձնարարագրի հրապարակմանը հաջորդող 30-րդ օրացուցային օրը հանդիսացել է 12.07.2013 թ-ը: Հետևապես 12.07.2013 թ-ին հաջորդող առաջին աշխատանքային օրը ստուգող կառուցվածքային ստորաբաժանումը պետք է զեկուցագիր ներկայացնեի հարկային մարմնի ղեկավարին ստուգման հանձնարարագիրը չեղյալ ճանաչելու (հաշվառումից հանելու) վերաբերյալ: Դրա փոխարեն ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ պետի 12.06.2013 թ-ի թիվ 2121287 հանձնարարագրի համաձայն 13.07.2013 թ-ին ՀՏԻԿԲԲԳ ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 25.07.2013 թ-ին կազմվել է ընկերության կողմից վիճարկվող թիվ 2121287 ստուգման ակտը:


Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ ՀՏԻԿԲԲԳ ՍՊԸ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 25.07.2013 թ-ի թիվ 2121287 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ